# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 5

## 21.12.2015 թ. կնքված N ՔՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/42 պետական գնման պայմանագրի

ք. Երևան 18.12.2017 թ.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հորիզոն 95>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Գալստյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության և <<Հորիզոն 95>> ՍՊԸ-ի միջև 21.12.2015թ. կնքված՝ աշխատանքների կատարման N ՔՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/42 պետական գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 4.6 կետի 5-րդ ենթակետը և 8.4 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի

1.1.1 Պատվիրատուն Պայմանագրի 5.1 կետով նախատեսված գումարից 23517000 (քսաներեք միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամը փոխանցում է ՀՀ ֆինանսների նախարարության <<900008000011 (մրցութային հայտերի և պայմանագրերի կատարման ապահովում)>> դեպոզիտային հաշվին: Նշված գումարն աշխատանքներն ավարտելուց հետո՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կվճարվի Կապալառուին՝ վերջինիս բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

1.1.2 Պայմանագրի 04.04.2017թ. կաքված թիվ 3 համաձայնագրի 1.1.2 կետի <<25500000 (քսանհինգ միլիոն հինգ հարյուր հազար)>> թիվը և բառերը փոխարինել <<մինչև 175500000 (մեկ հարյուր յոթանասունհինգ միլիոն հինգ հարյուր հազար)>> թվով և բառերով:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Կողմերի միջև կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Պ ա տ վ ի ր ա տ ու**

ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011011856,
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

**Կապալառու**

<<Հորիզոն 95>> ՍՊԸ
ք. Երևան, Ամիրյան 26
<<Պրոմեթեյ Բանկ>> ՍՊԸ
Հ/Հ 1660000224820100,
ՀՎՀՀ 00801721

Տնօրեն

Գ. Գալստյան
(ստորագրություն)